

50 ԲԱՐՍ

ՄԷՃՄՈՒՄԻ ԱՆՊԱՐ

50 ԲԱՐՍ

DIRECTION DU JOURNAL MEDJMOUA-I-AHBAR 65, Grand'rue de Péra, Taksim, 65	ԱՊՐԵՆԻ ԶԻՅԱԼՈՒԹՅՈՒՆ Խորհրդի իշխան Մեմբերի ԷՖԷՄԻԼԻ ԻՅԻՆ Մեմբերի ԷՖԷՄԻԼԻ ԻՅԻՆ	ՍԵՆՏԵՐԻ 6 ԿԱՆՈՒՐ Դրուժ 60 35 85 45 20 10	ՉԱՐՇԵՆՊԵՆ ԴԷ ԶՈՐԻՍՏԱՆ ԻՐԹԻՍԻ ԿԻՆԵՄԱՏՈՐ ՆԵՐՈՒՆՈՒՐ Կլանար իշխան պարսկական լուսավորչությունը :	مجموعه اخبار تقسیم جاده سی و نهم
---	--	---	---	-------------------------------------

Ս. ԲԱՆԱՆԱՅԱՊԵՏՆ

ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Ե.

Մարդիկ կան որք կարծես հաճոյք կը զգան իրենց չգիտցած խնդրոց վրայ խօսել և վճռել: Այս կարգէն են անոնք որ Արդիականութեան շարեաց առանց տեղեակ լինելու և Գերագոյն Քահանայապետին ուշիմ ու չղահայեաց կառավարութիւնն առանց ի նկատի ունելու, կը կարծեն թէ Պիոս Ժ. առիթ կը փնտռէ իւր մեծանունը նախորդաց անվերջ «Ո՛՛՛ կառավար» կը կրկնուի: Իսկ անխառնութիւնն աւելի առաջ կ'երթայ — զգուշիւ լինելու աստիճան —, երբ նենգամիտ բաղդատութիւն մ'ընել յանդգնելով՝ կը յայտարարեն թէ Լեւոն Ժ. ի օրով չպիտի պատահէին զէպօք որք կը պատահին այժմ, և թէ նա չպիտի դատապարտէր ինչ որ կը դատապարտէ Պիոս Ժ. Էշն: Նախ յայտնուէս սխալ է արտաքին զէպօքու մասին յայտնուած կարծիքը: Վասն զի կը բաւէ փոքր ի շատէ գիտակ լինել ժամանակակից պատմութեան՝ համոզուելու համար թէ Եկեղեցւոյ զէմ եղած վերջին յանդուգն ձեռնարկութիւնք ի վաղուց գիտուած ու պատրաստուած «plan»-ներու կերպարութիւնն էին միայն: Եւ յետոյ քիչ են մոլորութիւնք որք իւրինց ջանքախիչ դատապարտութիւնն ընդունեցին Լեւոն Ժ. Է: Կը բաւէ յիշել Ամերիկանութիւնը (Américanisme): Եւ հոս դարձեալ անոնք որ Հռոմի պարսաւին արժանացան, բողոքականներ, համաստեւածեաններ (panthéistes), նիւթապաշտներ չէին, այլ կաթոլիկներ որք այլապէս կրօնական դարձը դիւրացնելու գիտամբ՝ ինչ ինչ անընդունելի տեսութիւններ կը պարզէին: Երջանիկ Առաքելապետին յաջորդներու անունները կրնան փոխուիլ, բայց ոգին նոյնն է, այսինքն նախնի Աստուծոյ փառաց, ահա ճշմարտութեան և ուղղափառութեան, եռանդն Աւետարանի տարածման և պահպանութիւն հոսին Քրիստոսի:

Երբ մոլորութիւն մը սոսկ անհատական կերպարանք ունի, Ս. Քահանայապետք կը շատասան հեղինակն ազդարարելով, և յորդորելով որ ջանայ Ս. Գրքէն և Հարց Աւանդութենէն չհեռանալ բնաւ: Իսկ երբ մոլոր վարդապետութիւն մը գերեզմու, լրագրներու, հանդէսներու, համալսարաններու մէջ ճարտարութեամբ չընկէ զկին՝ իրեն օձ կը սողակի նաեւ արքայալոյսն մէջ, ինչպէս կրնայ լուի Ս. Քահանայապետն, ինչպէս կրնայ անտարբեր մնալ Հռոմի, մայր և ուսուցիչ ուղղափառութեան, կեդրոն և խորհրդի հաւատոյ: Ո՛՛, Յիսուսի Քրիստոսի Փոխանորդին համար հաճոյք մը չէ՝ երբեք նգովի և բանադրել, այլ տխուր պարտականութիւն մը, որում կը հարկադրէ զինք մարդոց տկարութիւնը կամ չաբութիւնը: Այն ատեն հաճութիւն կ'ըզայ նա՝ երբ կ'օրհնէ, կը պաշտպանէ և կը քաջալուրէ:

Ինչ ըսել մանաւանդ երբ Եկեղեցւոյ Գլուխը կը կոչուի Պիոս Ժ.: Եղած է

հայր մը աւելի քաղցր, աւելի դորովագուծ, աւելի ներող և անխնայար: Իւր հոգին որ միշտ Աստուծոյ մտերմութեան մէջ ապրած է՝ աստուածային բարութեան և գթութենէն բնաւ մ'առած է այնչափ արտաբերաւ, այնչափ գիւթիչ ու արկալի որ իրեն մերձեցողներուն վրայ գերբնական աշխարհի անբացատրելի մի հրապոյր կը թողու: Իրօք որ աստիճան անգութ լինելու է որք այսչափ վեհ և սիրալիր սիրտ մը վերադարձու համար: Գուցէ առաջի Աստուծոյ՝ արդիականաց — (խօսքս յամառողներուն մասին է միայն) — ամենէն ծանր ոճին է այսպիսի Հօր մը զէմ ըմբոստ գանուած լինել: Բարեբախտաբար գիտութիւն և սրբութիւն կան խաւ հերքած են յաղթական կերպիւ տղիւտութեան և մոլորութեան գծուած զրպարտութիւնները: Կարդինալ Գաբրիէլ Կապո, ի Միաբանութենէն Ս. Փիլիպպոս Ներեանի, որոյ գրական համբաւն, առաքինութիւնք և տաղանդք ո՛չ ումեք անծանօթ են, Պիոս Ժ. ի մասին հետեւեալ չքեղ վկայութիւնք գրած է հակիրճ այլ ոսկեղիւթիկ մատենի մը մէջ. ապագայի վճիռն հետի նուազեցնելէ՝ պիտի յաւելու մանաւանդ սոյն փայլուն ներկողական. «Այս Պապը, կը հաստատեն բիւրաւոր անձինք, ամենէն ազնուական ոգի մը ունի, բոցապառ գթով, լուսաւորեալ խորհրդաւոր պայծառութեամբ հաւատոյ որ կը յաղթէ ամեն մոլորութեան, և պատրաստ մեռնելու անոր համար: մարդ մ'է որ ի մանուկ տիոց ապրած է զոհողութեան և սուրբ սիրոյ կեանք մը: համեստ, խոնարհ, բարեկամ աղքատութեան, աչքերն յաւած միշտ զէպ յերկնս... Ո՛՛ մի երկրաւոր մտածութիւն կը միտգնէ իւր միտքը կամ կը վրդովէ իւր սիրտն, որովհետեւ իւր բոլոր մտածութիւնք և իւր համայն սէրն են Քրիստոս և Եկեղեցին» (1):

Կրնայ գտնուիլ կաթոլիկի մը որ սրբապէս հպարտ չլինի այսպիսի Հօր մը զաւակ լինելուն, և տեսակ մը բարոյական անձնապատկերութիւն չպիտի լինէր մերժել իւր վարդապետական գերիշխանութիւնը՝ գահավէժ գլուխը համար իսպառ նորա մոլ անհեղեղութեանց աղտոտ ու թունալից ճահիճներուն մէջ, Եւ ահաւասիկ էջ մը զոր կը յանձնենք Արդիականաց ուշիմ և բարեպաշտ խորհրդածութեան:

Ն. Յ. Վ. Փ.

Միւլեհայիկանը հեմապրոքսան սաւա. Ալիսիւրեան Յովնանէն ԷՖ. հաղթերիւնէ, ալիսիւն վաղ օլան խալիսիւնը զարուած՝ հարուստներու վարժարանը ձրօրէն յաճախելով՝ աւելի կը զարնուի զլիսիւն և կը հարկադրուի գլուխը ծռել միւսներուն և քծնիլ նոյն իսկ անոնց, համակրութիւնն չհանելու համար: Բայց, ասոր փոխարէն սա՛ ալ ապացուցուած է որ ամէնէն աւելի «ձրի» տղաքն են որ կը յաջողին իրենց դասերուն մէջ և իրենց հարուստ դասերն կերներուն քով առաջնութիւնը կը վաստակին: Եւ ասիկա ինքնին շատ բնական չէ՞ գտներ: Հարուստի տղան վատահ է ինքզինքին, իր հայրիկին, իր վիճակին. գիտէ որ երբեք դպրոցէն չպիտի վճուուի, գիտէ վերջապէս որ օրին մէկը գործի մը տէր պիտի ըլլայ: Մինչդեռ աղքատի տղան համար ձիւղ ասոր հակառակն է: Սա գիտէ որ իր ներկան ու ա-

Կ. ՊԱՏՐԻԱՐԷԱԿԱՆ ԿՈՆԴԱԿ

ԱՌ ՎԵՏԱՇՈՒՐ

ՅՈՎՀԱՆՆԵՍ ԷՓ. ԱՆԱՅԿԵՐՏԻ

Ներկայ Հայրապետական Կոնդակա Մերով կը փութամբ յանուն Մեր և յանուն Հասարակութեան արտադին շնոր-

(*) Card. Alfonso Capececiatro, Papa Pio X e la Francia, p. 7 Roma, 1907.

հակալութիւններ յայտնել Վսեմափայլ Տեառնդ այն գրամական կարեւոր նուիրատուութեան համար զոր Ձեր Վսեմութիւնը կը հաճի ընել: Հասարակութեանս սյուեալ հաստատութեանց, յանմոռաց յիշատակ իւր ողբացեալ վաղամեռիկ Որդւոյն՝ Ներսէս պէի Ալահիւրի, թախանձազին խնդրելով Աստուծմէ փառաւորել անոր արձանեալ հոգին ի կամարա Արդարոց վաս և կենդանի պահելով ի մէջ երկրասարգաց Հանգուցելոյն թողած առաքինութեանց պայծառափայլ օրինակը: Նոյնպէս կը մտղմեմք ի բոլոր արտէ որ գթաւատ Հայրն մեր Երկաւոր հաճի առատ առատ միջթար և դիւր մատուցանել Ձեր հայրական կարեւիւր սրտին և պահել և կարգուրել Ձեր պատուական օրերն ի գալիք գալիք արկածից կենցաղոյ ի խնդութիւն մեր ամենեցուն, և անսասան պահել Ձեր ազնուափայլ դատերքն և ընտանիքը և համայն պարագայքը: Եւ յառհաւատեալ Մեր առանձինն սիրոյն կը շընորհեմք Ձեզ և ազնիւ Գերբաւատանիդ Մեր Հայրապետական Օրհնութիւնը:

ՊՈԼՍ ՊԵՏՐՈՍ Ժ. ՍԱՊԱՆԵԱՆ
Կ. Պատրիարք Տաճն Կիլիկիոյ
Կ. Պոլիս, 27 Հոկտ. 1907

“ԶՐԻ”ՆԵՐԸ

Վարժարանի մը մէջ ամէնէն շահեկան զէմքերը ինծի համար «ձրի»-ներն են, մակդեր մը որով կը յորժըրջուին այն աղքատիկ ուսումնաստենչ տղաքը, որոնց ծնողքը կարող չէ դպրոցի մասնաւոր գումար մը վճարել իրենց զաւակներուն համար և ստիպուած են զանոնք նպաստաւորել տալ կրթամէր հարուստի մը բարեգործութիւններէն: Ու ամէնէն աւելի անոր համար կը հետաքրքրուիմ այս տղոցմով, որովհետեւ ասոնք գլխահակ վիճակ մը ունին վարժարանին մէջ, իրենց վճարող դասընկերներուն քով և կարծես ամօթով մը ծածկուած են միշտ: Ասոնք պարտաւոր են միշտ միւսներէն աւելի աշխատիլ, միշտ միւսներէն աւելի լուրջ ըլլալ և խելօք նստիլ: միւսները կրնան ուսուցիչը կամ տնօրէնը նեղացնել, որովհետեւ հայրիկինը դրամ կը վճարէ իրենց համար, բայց որ «ձրի»-ն է մնացել է ձայն հանել նոյն իսկ վարժարանին մէկ ակնյայտին անիրաւութեան դէմ: Աղքատին զաւակը ի տղայ տիոց գլխուն զարուած՝ հարուստներու վարժարանը ձրօրէն յաճախելով՝ աւելի կը զարնուի զլիսիւն և կը հարկադրուի գլուխը ծռել միւսներուն և քծնիլ նոյն իսկ անոնց, համակրութիւնն չհանելու համար: Բայց, ասոր փոխարէն սա՛ ալ ապացուցուած է որ ամէնէն աւելի «ձրի» տղաքն են որ կը յաջողին իրենց դասերուն մէջ և իրենց հարուստ դասերն կերներուն քով առաջնութիւնը կը վաստակին: Եւ ասիկա ինքնին շատ բնական չէ՞ գտներ: Հարուստի տղան վատահ է ինքզինքին, իր հայրիկին, իր վիճակին. գիտէ որ երբեք դպրոցէն չպիտի վճուուի, գիտէ վերջապէս որ օրին մէկը գործի մը տէր պիտի ըլլայ: Մինչդեռ աղքատի տղան համար ձիւղ ասոր հակառակն է: Սա գիտէ որ իր ներկան ու ա-

պագան խախուտ է. գիտէ որ ամենապակասիկ թերութեան մը փոխարէն կրնան զինքը դպրոցէն վճնտել ի սպառ, գիտէ որ եթէ չաշխատի՝ ապագային անսթի պիտի մնայ, գիտէ վերջապէս որ ինք ձրի է և թէ ուրիշ անձնաւորութիւն մը՝ իր մասին հաւատ ունենալով իր տեղը կը վճարէ և թէ ո՛չ միայն երախտապարտ, այլ մեծապէս պարտական է անոր: Ու բոլոր այս պատասխանատուութեանց գիտակցութիւնը կը մղէ զինքը աշխատելու, մա՛րդ ըլլալու: Ահա՛ թէ ինչու աղքատին զաւակն է որ ամէնէն աւելի մարդ կ'ըլլայ, մինչ հարուստին զաւակը ընդհանրապէս կոչում ունի աօք մարդ ըլլալու: Անշուշտ այս բանը իբր ընդհանուր կանոն չեմ ըսեր, և մէկէ աւելի հարուստի զաւակներ կը ծանշեմ, որոնք թէ՛ դպրոցին մէջ առաջին ելած, և թէ՛ յետոյ կեանքի թատերադրան մէջ առաջին թիկնաթու մը գրաւած են: Սակայն նորէն իմ համակրութիւնս կ'երթայ «ձրի»-ներուն, որովհետեւ հարուստի զաւակն համար սչինչ է յաջողութիւն: Ամէն ինչ նպաստաւոր է անոր համար, բայց աղքատին զաւակն համար խիստ բարձր խնդիր մըն է յաջողութիւնը: Դպրոցական կեանքը որ տակաւին ա՛յնչափ հեռու չէ ինչ, վերջուեղ կուտայ ինծի իմ ժամանակիս դպրոցական ընկերներու մէջ «ձրի»-ները, որոնք քով կ'երթային միւսները՝ թուարանական խնդրի մը լուծումը հարցնելու կամ շարադրութիւն մը գրել տալու համար, ծաւալութիւնները զօրս ահոնք — «ձրի»-ները — չէին մերժեր՝ ի ծնէ միւսներուն հնազանդելու հակամիտութիւնը ունենալով: Չէ՞ք խորհրդ արդէն թէ ո՛րչափ սաստիկ ըլլալու է ուսումնի տենչը այն աղքատի տղոց քով, որոնք շատ անգամ պանիր-հացով ու յաճախ ու չինով անանելով՝ կուգան իրենց դաստիարակութեան ու կրթութեան պատգամը յազգեսնել: «Զաւակ»ս, մենք հարուստ չենք, պէտք է երթանք ապրուստող շահի», կը պատուիրէ՝ ծնողքը անոնց. բայց ասոնք կուլան, կը ճշան. «Հայր, մեզի դպրոց զրկէ, մայր, մենք ուսմիլ կ'ուզենք», կը հեկեկեն այդ աղքատի ուսումնաստենչ զաւակները: Ու հազար ու մէկ զրկանքներով կը յաջողին հետեւել վարժարանին դասընկերներուն, ծակ կոշիկներով, պատաստուն բանդալոններով, կարկուտած զգեստներով, և իրենց ու իրենց ծնողքներուն մեծագոյն գոհունակութիւնը կ'ըլլայ այն օրը միայն, — մրցանակաբաշխութեան նուիրական օրը — ուր այդ ծակ բանդալոնով տղաք առաջին կը հանդիսանան իրենց թաւչեայ բանդալոններով ընկերներուն քով: Ինչ պիտի ըլլային այս տղաքը, եթէ փոխանակ աղքատի զաւակ ծնած ըլլալու, հարուստի զաւակներ ծնած ըլլային: Սակայն չեմ յառաջանար այս մտածումիս մէջ, խորհելով որ մի գուցէ ասոնք ալ ծոյլ ու անհոգ ըլլային, եթէ հանգիստի ու ճոխութեան մէջ աշխարհ ըլլային եկած:

Այս խորհրդածութիւնները ներշնչուեցան ինծի այն 6000 ոսկիի նուիրատուութեան առթիւ զոր Վսեմ. Յովնանէն էՖ. Ալահիւրի ըրեր է մեր Ս. Գրքոր Լուսաւորելու Ուսումնարանին, ի յիշատակ իր սիրելի վաղամեռիկ որդւոյն Ներսէս պէի, որուն շնորհիւ շատ մը աղքատիկ տղաք-

(Skizzen)